Արձանագրություն N3

<<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 հունիսի 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Վ. Սարգսյանը Հ. Սիրունյանը և Ս. Աբազյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1.Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին

Օրակարգ՝

1. <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. N2 բացման նիստի արձանագրությամբ ընթացակարգի մասնակից <<Հորատանցք>> և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ներից պահանջված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:

2. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու արդյունքների ամփոփում:

3. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով մրցույթի 1-6 չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<Բիդեք>> ՍՊԸ-ի կողմից հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

4. ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված հարցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության վերաբերյալ:

---

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Հորատանցք>> և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ները սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել են համապատասխան փաստաթղթերը (այն է՝ շինարարության իրականացման ոլորտի <<Հիդրոտեխնիկական>> լիցենզիա):

Մասնակիցների կողմից I փուլի ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

25.05.2018թ. համակարգի և էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով մրցույթի 1-6 չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<Բիդեք>> ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի

միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն 31.05.2018թ. դրությամբ ընկերությունը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Տեղեկատվությունը ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված հարցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է 29.05.2018թ., որը համապատասխանում է մասնակցի ներկայացրած հայտարարությանը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. <<Հորատանցք>> և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ների սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված փաստաթղթերը ընդունել:

2. Մերժել «Բիդեք» ՍՊԸ -ի հայտը՝ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ–ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացվելու հիմքով:

3. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ–ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով <<ՎԱԼՄԼ>>, <<Աշոկ շինարարական ֆիրմա>> և <<Արտեզիա>> ՍՊԸ-ներին առաջարկված գների նվազեցման նպատակով 05.06.2018թ. ժամը 11:00-ին հրավիրել բանակցությունների, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի շենքում (Վարդանանց 13-ա):

4. 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից <<Վարուխ>> ՍՊԸ և <<Ատլանտ>> ՍՊԸ կոնսորցիումին համարել 1 տեղ զբաղեցնող մասնակից, 4-րդ չափաբաժնի մասով 1 տեղ զբաղեցնող մասնակից համարել <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ին, 5-րդ չափաբաժնի մասով 1 տեղ զբաղեցնող մասնակից <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ին: Ընկերություններին նեկայացնել առաջարկ՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ–ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5 և 5.1 և 5.2):

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Բալայան

_____ Է. Մխիթարյան

Անդամներ _____ Վ. Սարգսյան

_____ Հ. Սիրունյան

_____ Ս. Աբազյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան